

ԱՆԳԼԻՍԿԱՆ ԴՊՐՈՑ

(The New-school Abbotsholme).

Հ Ե Ր Մ Ա Ն Լ Ի Ց Ի.

Հրաշալի է երկիրը: Վաղ առաւօտ է: Արեւելքում փայլում է արշալոյսը: Չնայելով որ նոյեմբեր ամիսն է, բայց և այնպէս, կանաչ մարգագետինների վրայ փռուած արածում են բազմաթիւ ոչխարներ, կովեր և ձիեր: Առանձին հողաբաժինները բաժանուած են իրարից փշեայ ցանկապատներով, այնպէս որ անասուններն արածում են առանց որևէ հսկողութեան: Թէ և մենք բաւական հիւսիս ենք գտնուում, բայց և այնպէս ձմեռուայ նշաններ չեն երևում: Այդ իսկ պատճառով, առանց երկիւղի կարելի է անասունները գիշերները բացօդեայ թողնել: Եթէ թարմ կանաչը չի գոհացնում, տաւարին տալիս են չոր խոտ: Այս տեղերում վարելահողեր գրեթէ չկան: Ուրիշ երկրների անսպառ բերքերը բաւականաչափ արժան հաց են մատակարարում այստեղի բնակիչներին:

Ահա մենք անցանք մի փոքրիկ բաղաբի մօտից, հիմնուած դեռ Հռոմէական շրջանում և մեր առաջ բացում է միանգամայն գիւղական տեսարան: Մարգագետինների միջով — արագընթաց խոխոջուն գետակի (dove) ընթացքով, մօտենում են «նոր դպրոցի» սահմաններին: — Դա մի փոքրիկ ձթագաւորութիւն է թագաւորութեան մէջ: Արեւելեան կողմից անտառապատ բլուրներին կից մի բանի հիգտոր մարգագետինները կազմում են դպրոցապատկան կալուածքների մի մասը: Գետակը մէկ ու կէս մղոն երկայնութեամբ հոսում է դպրոցապատկան կալուածքների միջով: Գեղեցիկ,

յաճախ հաղուադիւտ և բարձրաբերձ ծառերը գեղարուեստօրէն բարձրացնում են իրենց կատարները մարգագետինների կանաչի միջից: Նրանց վրայ կախած փղբրիկ նշանատախտակներից կարելի է իմանալ նրանց անունները և հայրենիքը: Բււում է—որ մենք գտնուում ենք մի մեծ բուսականական պարտիզում—եթէ ոչ դրախտում:

Դաստիարակը իւր պատասխանատու գործը չի կատարում բաղաբում—ուր հազարաւոր զանազան ազդեցութիւններ գրւում են սանիկի ուշադրութիւնը և յաճախ չեզոքացնում ուսուցչի ազդեցութիւնը, այլ բնութեան ծոցում, ուր նա կարող է ապրել լսեփական թագաւորութեան մէջ իւր աշակերտների հետ, և միմիայն նրանց համար, ուր աշակերտները կարող են ազահուութեամբ շնչել առողջարար օդ, առանց երկնչելու, որ այդ օդի հետ իրենց մարմնի խորքը կարող են թափանցել հազարաւոր փնասական բաղադրանքներ, ուր մարդկային ձեռքի բաղմազան շլացուցիչ արտադրութիւնները արգելադրի չեն հանդիսանում ամեն օր և ամեն ժամ խորասուզուելու Արարչի ստեղծագործութեան, թէև շարունակ փոփոխուող, բայց յաւիտենական արարածների աշխարհը: Բոլոր շրջակայքը—բլուրները և հովիտը, դաշտը և գետը, սարը և աղբիւրը, անտառները և մարգագետինները ծառայում են երեխաների իբրև միշտ բաց դասագիրք: Ուսուցման և կրթութեան իւրաքանչիւր կարևոր վայրկեանի համար կարելի է օգտուել այս անդուգական դասագրքի որևէ երեսից:

Բաւական է որչափ հիացանք հրաշալի տեսարաններով, մտնենք այժմ նպատակայարմար կերպով կառուցուած դպրոցական ընդարձակ, օդառատ և պայծառ շէնքը: Նայեցէք պատուհանին. չկայ մի սենեակ, որի մէջ պատուհանի մասերը, ըստ ցանկութեան բացւում են դէպի վեր և կամ ընդհակառակն... Ընդունարանի հնոցում կրակ է վառւում, որ օդը ոչ միայն թարմ լինի, այլ և բաւականաչափ տաք: Ամեն ինչ այստեղ կառուցուած է առողջապահական կանոններին համապատասխան և գրաւիչ կերպով, ամեն ինչ տրամադրում է ձեզ քնալ և ուրախութեամբ անցկացնել ձեր օրը ուսանողների հետ:

Եօթը՝ ժամն է։ Մեզ տանում են երեխաների ննջարանը։ Մեծագույն մասը դեռ ննջում է խաղաղ քնով։ Մեր սանելու ժամանակ մի քանիսը արթնանում են և տրորում իրենց քնաթաթախ աչերը։ Բայց ահա լսուեց հնչակի ձայնը։ Մի քանի լողկի մէջ բոլորեքեան վեր կացան իրենց սպիտակ բրդեայ վերմակների տակից։ Ննջարանի գրեթէ բոլոր պատուհանները բաց էին ամբողջ գիշեր և դեռ էլի բաց են։ Այժմ ջուր չեն խնայում և գրեթէ բոլորը ընդունում են նստած լողարան։ Թէ փոքր և թէ մեծ աշակերտները (այստեղ կարելի է գտնել 11-ից մինչև 18 տարեկան երեխաներ) լուսնում են իրենց մարմինը սառը ջրով և արագութեամբ սրբում։ Իւրաքանչիւր աշակերտ ունի առանձին աւաղան իւր սպունգով։ Այժմ խկ, ձմեռը, ոչ ոք չի վախենում սառը ջրից, որին ընտելացել են և որ մի տեսակ անհրաժեշտ պահանջ է դարձել նրանց համար։ Այնուհետև արագութեամբ հագնում են գործնական և առողջապահական պայմաններին յարմարեցրած զգեստները, որ միևնույն ձևի է թէ ուսանողների և թէ ուսուցիչների համար՝ բոլոր շապիկ վզնոցով, բրդեայ գործուածքից կարած կարճ, մինչև ծունկը հասնող վարդիկ և նոն տեսակ բաձկոնակ գոտիով։ Այդ հագուստը կարծես տրամադրում է մարդուս վաղվելու և թուլեցնելու։

Լսուեցաւ երկրորդ զանգը. եօթից բառորդ անց է։ Գրեթէ բոլոր աշակերտները հագնուած են։ Մի քանի վարկեանի մէջ բոլոր երեխաներին ղուարթ և առոյգ դէմքերով տեսնում ենք խիստ կարգապահութեամբ շարուած ուսումնարանի դարպասի առաջ։ Դպրոցական զօրագնդի «զօրապետը» անցնում է զօրքի առաջ և դիտում թէ, կարգի՞ն է արդեօք ամեն ինչ։ Ամեն ոք իւր տեղումն էր։ Լսուեցաւ «զօրապետի» և «գնդապետների» հրամանը—բոլորն արագ ուղղուեցան դէպի դպրոցական կալուածքի սահմանը և արագութեամբ յետ վազեցին այնտեղից։ Զօրապետը և իւր օգնականները բոլորովին յետ չեն մնում իրենց ամենից արագավազ աշակերտներից, որովհետև նրանք մանկութիւնից մինչև այսօր ոչ մի օր յետ չեն մնացել այս վարժութիւնից։

Ամենքը հաւաքուում են պատրաստուում և գնում են ուսումնարանի մատուռը։ Պատերի վրայից կախուած միշարք

կրօնական և այլ նշանաւոր հերոսների պատկերներ: Նրանցից իւրաքանչիւրը յիշեցնում է թէ սաներին թէ ուսուցիչներին իրենց պարտաւորութիւնները: Պատկերների ընտրութիւնը այն ձևով է կատարուած, որ նրանքի մի գուսարած կարծես ամփոփում են իրենց մէջ մարդուս պարտաւորութիւնը դէպի Աստուած, մարդիկ և դէպի ինքր: Նրանք աննկատելի բայց շատ նպաստում են պարտաճանաչութեան գիտակցութեան զարգացման: Երեխաները հանգիստ և լուրջ արտայայտութեամբ նստած են իրենց տեղերը: Նրանք սովորել են իրանց կարգին պահել անգամ երբ ոչ ոք չի հսկում նրանց վրայ: Բայց ահա եկան և ուսուցիչները երկար թիկնոցը հագին, գերմանական բահանների և պրօֆէսսորների վերնադգեստների նման: Զգեստը միանգամայն համապատասխանում է իրականութեան. ուսուցիչները ուսումնարանում բահանայի պաշտօն են վարում: Աշակերտների հետ ծուկն են չոքում և երգում են անգլիական ամենապարզ և հիանալի հիմներէջ մէկը: Յետոյ կարդում են աւետարանից մի կտոր (երբեմն էլ կարդում են գործ առաքելոցից կամ թղթերից): Ընթերցանութիւնը ինչքան հնար է յարմարեցնում են պատկերներին: Ուսումնական տարուայ իւրաքանչիւր շաբաթը մասնաւորապէս յատկացւում է այդ հերոսներից (սրբերին) մէկին: Քրիստոսի կեանքի պատմութիւնը բաժանուած է ամբողջ տարուայ վրայ: Վերջում երգում են մի սիրուն սաղմոս — այս օր 91-դն է, — կարճ հատուածներ ժամասացութիւնից և ապա աղօթք, որ մի պարզ խնդրուածք է, զուրկ որ և է դոգմայից, բայց հանդիսաւոր կերպով ասուած լինելով, սաստիկ զգացնում է մեզ:

Սակայն ստամոքսը սկսում է յիշեցնել իւր պահանջները: Շտապում ենք սեղանատուն, ուր ամեն ինչ պատրաստ է նրան գոհացնելու: Ամեն մէկ ուսուցչի և աշակերտի տեղում դրուած է մի մի ափսէ տաք վարսակի ապուր (porridge) շաբարով և սերով: Մենք սկզբում փոքր ինչ կասկածաբար վերաբերուեցանք դէպի այս առողջարար և սննդարար կերակուրը, բայց մի բանի գդալ բերաններս առնելով՝ շատ հաւանեցինք և միանգամից համաձայնուեցինք, նա թէյից և սուրճից լաւ է: Սե և սպիտակ հացի կոյտերը, տապակած

ձկնեղէնը, խաշած ձուն և ձուազեղը աննկատելի կերպով չքանում են: Եւրաբանչիւր որ ախորժ հաճութեամբ դատարկում է մի թաս կակաօ: Պակաս զուարճութիւն չեն պատճառում քաղցրեղէնը և պտուղները: Սակայն չափազանցութիւն չի նկատուում: Ինչպէս այս օր, նոյնպէս և ամէն օր սեղանատունը զարգարուած են ծաղիկների թարմ փնջերով, որ ժողովել են ուսումնարանի բազմութիւն ջերմոցներից: Պատից կախած՝ Լեօնարտի և Վինչի՝ «Խորհրդաւոր ընթերց» նկարը օրինակ է թէ ի՞նչ հոգով և զգացմունքներով պիտի համակուած լինին աշակերտները կերակրի ժամանակ: Ամբողջ շարք ուրիշ հրաշալի պատկերներ բնականաբար ծնեցնում են մտքերի այլ շարքեր: Նոքա ուսուցանում են, որ ֆիզիքական կեանքը պէտք է հպատակեցնել բարոյական օրէնքներին: Այստեղ, ինչպէս ամէն ինչ, նոյնպէս և գեղարուեստը կոչուած է ծառայելու կրթութեան գործին, յաճախ նրա լեզուն աւելի ազդու է, քան կենդանի խօսքը, - միւս կողմից էլ խօսքը աւելի խիստ տպաւորութիւն է թողնում: Ամենքը միաժամանակ են սեղան նստում, որ սկսւում և վերջանում է երգեհոնի ձայնակցութեամբ մի կարճ աղօթքով:

Բայց ժամը ութն եղաւ: Այժմ երեսներին տեսնում ենք մի նոր գործի վրայ, որ մենք անհամապատասխան կհամարէինք նրանց համար, բայց նրանք այդ կատարում են մեծ հմտութեամբ և արագաշարժութեամբ, որ մի տեսակ ճարպիկութեան է վարժեցնում նրանց: Ննջարանը կարգի են բերում (Dormitory—porade) բոլոր լուսամուտները կըրընկի վրայ բաց են: Բրդեայ վերմակները ձեռքից ձեռք են թռչում: Մեծ խնամքով մաքրում կարգի են բերում և մի քանի ըոպէում ամէն ինչ պատրաստ է, պարզ մահճակալի վրայ բացի ներքնակից և վերմակից ուրիշ ոչինչ չկայ: Այս բոլորը կատարում է արագ, մաքրութեամբ, կարծես նախօրօք որոշուած ծրագրով: Ննջարանում վայելուչ կարգապահութիւն է տիրում: Այդ տեղ հսկում են, եթէ միայն հսկողութեան կարիք կայ, պրիֆիկաը, աւագը, որ շնորհիւ այդ պաշտօնի ներշնչուած է պարտաճանաչութեան և պատասխանատուութեան գիտակցութեամբ, նոյնն է կատարում թէ գլխաւոր և թէ միւս շէնքերում: Աշակերտների մի մասը

ապրում է չորս այլ փոքր շէնքերում և իւրաքանչիւր շէնքում նրանց հետ ապրում է մի ուսուցիչ:

Ահա դպրոցական շէնքի բոլոր մասերում լսուեցաւ նուագաւթեան ձայնը: Թէև աշակերտների վերայ առանձին հսկող չկայ, բայց նրանք մեծ բարեխղճութեամբ օգտւում են երաժշտութեան համար նշանակած 20 ռոպէից:

Ութ և կէս ժամին մենք գնում ենք գերմանական դասարանի փոքր բաժանմունքը: Բայց այս ի՞նչ է. մի՞թէ դաս է:—Մի՞թէ մենք Անգլիայում չենք: Պ. Նէյմանը նշան անելով, մանուկները մէկը միւսի ետևից դուրս են գալիս իրենց տեղերից: Իւրաքանչիւրը մի որ և է գործ է կատարում. շրջում է, կոճկում կամ հանում է իւր կօշիկները, գլուխ է տալիս և այլն: Նա կամ իւր ընկերները իւրաքանչիւր շարժուածք անուանում են համապատասխան գերմանական բառերով: Յաճախ դիմում են երեւակայութեան և այդ ժամանակ դասատունը փոխւում դառնում է բաղնիս, սեղանատուն, ննջարան, արհեստանոց, խանութ, հիւրանոց, փոստային գրասենեակ, երկաթուղու կայարան, հրդեհատեղի և այլն: Երեխաները գերմաներէն պատմում են այն ամենը, ինչ որ այնտեղ կատարւում է: Օրինակ՝ մէկը տախտակից գործիքների համար արկղ է շինում և ասում է գերմաներէն. «Ես վերցնում եմ տախտակը, ես գնում եմ սղոցը բերելու, ես վերցնում եմ անկիւնաչափը և գծաչափը: Ես իմ առաջն եմ դնում մօդելը: Ես մօդելի վերայ չափում եմ արկղի երկարութիւնը և այդ չափը նշանակում եմ տախտակի վերայ և այլն և այլն»:

Տղաները առանց դժուարութեան և յաջորդաբար արտայայտում են բովանդակութիւնը: Այդ բովանդակութիւնը նրանց գրաւում է: Նրանք իւրացնում են բառերի մեծ պաշար, որ պէտք կգայ, երբ նրանք գործ կունենան գերմանացւոց հետ: Այստեղ լեզուն ուսուցանելու համար առհասարակ այն կարծիքի են, որ թէ մայրենի և ի՞թէ օտար լեզու կարելի է սովորել միայն այն դէպքում, երբ մարդ շատ է խօսում նրանով: Նոյն սկզբունքին հետևում են և ֆրանսերէնն ու լատիներէնն աւանդելու ժամանակ, որի դաստաւութիւնը սկսւում է յաջորդ դասարանում: Խօսքը միշտ կապւում է գործի և կամ նրա արտայայտու-

Թեան հետ պատկերի վերայ: Զի նկատուում ո՛չ Թմրածու-
թիւն և ոչ դէմքի տեսուր արտայայտութիւն: Սոքա գա-
ղափար չունին ընդարձակ բերականական գիտութեան և կա-
նոնների բերան առնելու մասին: Մի՞թէ բերականութիւն
կարելի է համարել այն, որ մանուկը մի բան որ պատմել
է անցեալ ժամանակով, այժմ նոյնը կրկնում է ապառնի
և կամ ներկայ ժամանակներով: Ըստ երևոյթին, այդ վար-
ժութիւնները դուր են գալիս երեխաներին: Յարմար առի-
թին ուսածը միշտ գործ է դրուում: Օտար լեզուների ու-
սուցիչները գրեթէ բացառապէս իրենց աւանդած լեզուներ-
ով են խօսում աշակերտների հետ: Ժամանակ առ ժամա-
նակ երեխաները իրենց ծնողներին նման գրելիս օտար լե-
զուով են գրում: Երբեմն ժամասացութիւնն անգամ լինում
է օտար լեզուով:

Ոչ մի դաս 45 րոպէից աւելի չի տւում: Դասը ոչ
միայն մեզ, այլ և աշակերտների համար էլ կարծես շատ
արագ անցաւ: Բաւական երկար դասամիջոցից յետոյ, գնա-
ցինք Վերանսիական դասարանի» փոքր բաժանմունքը (11—12
տարեկան երեխաներ): Գրատախտակի մօտ կախուած է մի
պատկեր, որ ներկայացնում է գիւղական կեանքը Փրան-
սիայում ձմեռը: Մանուկները Փրանսերէն լեզուով պատմում
են ինչ որ տեսնում են պատկերի վրայ: Դժուար խօսքերը
գրւում են գրատախտակի վրայ, յետոյ արտագրւում տետ-
րակներում: Յետոյ պատկերի տեղ կախւում է Ֆրանսիայի
քարտէզը: Քարտէզի օգնութեամբ մեր դասարանը մտաւո-
րապէս ճանապարհորդում է Փարիզից Տուլոն: Ինչ ասել
կուզի, որ ճանապարհին շարունակ Փրանսերէն են խօսում:
Այդպէսով մենք ոչ միայն Փրանսերէն լեզուն սովորեցինք,
այլ և տեղեկութիւններ ստացանք նրա պատմութիւնից,
քաղաքակրթութիւնից և աշխարհագրութիւնից: Մենք բոլո-
րովին չցաւեցինք, նկատելով այստեղ մեր բարեկամ Մար-
գարի բացակայութիւնը: Քերականութիւնը սկսւում է այս-
տեղ միայն այն ժամանակ, երբ փոքր ինչ գործնականապէս
ծանօթանում են լեզուի հետ: Ծանօթ նիւթից աշակերտ-
ները աստիճանաբար դուրս են բերում լեզուի գիտութեան
համառօտ կանոններ: Համաձայնութիւնից անցնում են միայն

այն, ինչով որ աւանդելի ընդուն տարբերուում է մայրենի լեզուից:

Աւելի ևս լաւ ծանօթանալու համար ուսուցման այդ ձևի հետ, որ «յսօրինակ զարմանալի հետեւանքների է հասցնում, մենք գնում ենք գերմանական դասարանը, տասն և հինգ տարեկանների մօտ, նախօրօք մեծ դասամիջոցին կաղդուրելով մեզ բիսկվիտներով և կաթով ու բաւականաչափ վազվզելով գաւթում: Դասարանի պատերի վերայ մենք տեսնում ենք Եւրոպայի պատմական բարոէզներ: Գրատախտակին կից, պատի վերայ, կախուած է Լոմայերի մեծադիր բարտեզը, որ ներկայացնում է պատերազմ Գոթերի հետ Վեղուվի մօտերում: Գերմանական ուսուցիչը անգլիական դպրոցում, գերմաներէն լեզուով պատմում է Գերմանիայի պատմութեան դասը: Ինչ ասել կուզի, որ դրա համար կան և դիտողական բաղմաթիւ պարագաներ: Բացի վերը յիշածներից երեխաները շատ հաւանեցին Լեմանի պատմական բաղաբարթական պատկերները, Անեօտելի պատմական նկարների առասը և այլն: Մեծ նշանակութիւն ունին նոյնպէս պատմական աղբիւրներից բաղուածօրէն կազմուած հատընտիրները: Երեխաները խօսում են գերմաներէն: Երբեմն ընկերները և ուսուցիչը օգնութեան են հասնում, բայց ընդհանրապէս գործը յաջող է ընթանում: Անգլիացի երեխաները Ալարիխին, Թէոդորիխին, Կարլոս Մարտելին, Կարլոս մեծին ևսլին աւելի լաւ են ճանաչում, քան թէ գերմանացի գիմնազիստները Անգլիայի հերոսներին: Յիշեալ հերոսների պատմութիւնը արձակ պատմելուց յետոյ, աշակերտները Դանից և Լենգից ոտանաւորներ էն ասում նուիրուած նոյն անձնաւորութիւններին: Բոլոր դասարանում նկատուում է մի անսովոր ոգեւորութիւն:

Չենք տեսնում այստեղ ձեռնարկներ, որ ըստ մեր հայեցակէտի, չափազանց անհրաժեշտ են: Մեր ձեռնարկների մասին առաջարկած հարցին պատասխանեցին—ցոյց տալով դասարանի անկիւնում դրած պահարանի մէջ փոշիով ծածկուած գրքերը—ընդ նմին յայտնելով, որ նրանց տանել էին կարող: Եւ իսկապէս պատկերները և այլ պիտոյքները առաւել դիտելի և գեղարուեստօրէն են պարզում պատմական հանգամանքները, դէպքերը և բնաւորութիւնները, քան

Թէ այդ երևում է դասագրքերի մէջ և այդ իսկ պատճառով վերջիններս այստեղ աւելորդ են նկատուած: Պատմական նիւթի դասաւորութիւնը, որ այստեղ հետեւանք է ընդհանուրի աշխատութեան, աշակերտները մօցնում են իրենց տեսարաններում — հեշտ դիտելի ծրագրի ձևով: — Երևում էր, որ պատմութիւնը աշակերտների սիրելի առարկան էր դարձած: Հարեան ազգերի պատմական կեանքից դէպքեր պատմելով: — ուսուցիչները միշտ համադրութեան մէջ են դնում պատմածը ազգային պատմութեան համանման դէպքերի հետ, որ անցնում են այստեղ երկու տարի առաջ բան ֆրանսիայի և Գերմանիայի պատմութիւնները, այնպէս որ նա միշտ կազմում է ուսուցման կենդրոնը: — Այստեղ, այսպիսով ազգայինը ներկայանում է իբրեւ մի չափ, որով չափւում է օտարազգին: — Նոյն է նկատւում և լեզուի դասերին, — ամեն ուրեք մասնանիշ են անում ազգակցութեան, նմանութեան, նոյնութեան կամ թէ մայրենի և օտար լեզուների մէջ եղած զանազանութեան վրայ: Պատմական բովանդակութիւնը այն աստիճան հետաքրքրում է թէ ուսուցիչներին և թէ սաներին, որ նրանք շատ հեշտ և արագութեամբ կարողանում են յաղթահարել լեզուի կողմից առաջացած դժուարութիւնները: Գիտական և խօսակցական նիւթի այս օրինակ կապակցութիւնը օգտակար է հանդիսանում երկու տեսակէտով: — նախ հեշտացնում է պատմութեան, աշխարհագրութեան ուսուցումը և երկրորդ առաւել լաւ է իւրացւում ուսանելի լեզուն: Ուսուցման այս ձևը գործադրւում է երբեմն և բնագիտութեան դասաւորութեան ժամանակ: Աշակերտները այդ ժամին կարծես մոռանում են, որ իրենք այս ինչ լեզուի դասն ունին: Այն ինչ հին եղանակով, որ գործադրւում է և այժմ մեր դպրոցներում, մանուկները գործ ունին միմայն ձևերի հետ, որ յոգնեցնում է նրանց:

Ցաւելով պիտի ասենք, որ մենք, — ասացին մեզ այդ ուսումնարանում, — չենք կարող ճշգրիմայեցիներին այնքան ժամանակ նուիրել, ինչքան որ գերմանացիներին և ֆրանսիացիներին: Առաջինները աւելի աւագ են բան թէ երկրորդները և երրորդները: Այստեղ համոզուած են, որ երեխաները ամենից առաջ լաւ պիտի ուսումնասիրեն մայրենի:

լեզուն և հին լեզուների սկսելուց առաջ՝ երկու անհրաժեշտ օտար լեզուները՝ Ամենից առաջ պատեղ ևս աչքի է ընկնում՝ վարժութեանց ձեռնարկի քացակալութիւնը, որի մէջ անկապ կտրոնեցով պատմում է իրար հետ ոչինչ առնչութիւն չունեցող նիւթեր. — այնպէս որ մանուկները 5 րոպէի ընթացքում անցնում են Եւրոպայից Ասիա, այնտեղից Աֆրիկա, տասերորդից 19-րդ դարը։ Անկապ, ու այդ պատճառով, անօգուտ վարժութեան համար այդքան ժամանակ կորցնելու փոխարէն, նախապատիւ են համարում սաներին լեզուի ձեւերի հետ ծանօթացնելու համար նիւթ առնել նոցա հետաքրքրող, ու այդ պատճառով առաւել արժէք ունեցող նիւթերից։ Ցարական դասարանում, ասոր լատիներէն լեզուի համար իրրեւ վարժութեան նիւթ ծառայում է ուսումնարանական կեանքի նկարագրութիւնը։

Ինչպէս Ֆրանսերէն լեզուի դասերին ուսումնասիրում են Ֆրանսիայի պատմութիւնը և աշխարհագրութիւնը, նոյնպէս և լատիներէն լեզուի դասերին ուսումնասիրում են հռոմէական պատմութիւնը և քաղաքակրթութիւնը։ Բայց լատիներէնի ծրագիրը այնքան ընդարձակ չէ, ինչքան Ֆրանսերէնի և գերմաներէնին։ Հռոմէական քաղաքակրթութեան հետ աշակերտները ծանօթանում են այն հեղինակների ընթերցանութեամբ, որոնք Անգլիայի համար առանձին նշանակութիւն ունին, իսկ մնացածը յետաձգում են մինչև համալսարան։ Վիկերոնի ձառերը և հռոմէական մտքի դոյնանման արտադրութիւնները սյուստեղ անծանօթ են։ Լատիներէնի ուսուցումը պոստեղ սկսւում է հռոմէական քաղաքակրթութեան յիշատակարանների ուսումնասիրութիւնից Անգլիայում։

Այս օրինակ բոլոր դասերը, բացի իրենց զուտ մանկավարժական նշանակութիւնից, ծառայում են որպէս միջոց ազգերը իրարու մօտեցնելուն։ Աշակերտներն ընտելանում են որոշելու սեփական և հարեան ազգերի առանձնայատկութիւնները։ Սովորում են նայել ուրիշ երկիրների քաղաքացւոց վրայ, որպէս ընդհանուր ընտանիքի՝ մարդկութեան անդամների և ոչ թէ թշնամիների վրայ, որոնց հարկաւոր է կոտորել։

Մնացած ժամանակը (մինչև 1 ժամը) և այնուհետև

$4\frac{1}{2}$ Ժամից մինչև 6-ը (ճաշից յետոյ լինում է երկու դաս) — մենք աշխատում ենք ծանօթանալ բնական գիտութիւնների և մատեմատիքային դասատուութեան եղանակի հետ և համոզուում ենք, որ այդ առարկաները միանգամայն լաւ են դրուած այդտեղ, որ շատ էլ անապասելի չէ, բարձր քաղաքակրթութեան հասած Ժողովրդի մէջ և ի մասնաւորի Անգլիայի նման ընդարձակ առեւտրականութիւն և արդիւնաբերութիւն ունեցող մի երկրում: Այդ առարկաների դասատուութեան սկզբունքները շատ նման են այլ առարկաների դասատուութեան սկզբունքներին: Նշանաւորն այն է, որ այստեղ երկրաչափութեան գլխաւոր դասագիրքը հանդիսանում է ոչ թէ Կեմբրիջի կամ թէ դրա նման մի ուրիշը, այլ արհեստանոցը իւր տախտակներով, գերաններով, ստուարաթղթի զանազան ձևի և մեծութեան թերթերով և այլն — ինչպէս նաև բոլոր շրջակայքը՝ դաշտը, գետը, ճանապարհը, բլուրը, ծառը և այլն և այլն: Դրանց միջոցով են ծանօթանում մանուկները երկրաչափական ձևերի հետ. այս տեղերում են վարժուում մանուկները գործնական լեզուաչափութեան հետ: Այստեղ, առանց գործնական վարժութեան երկրաչափութիւն չեն ընդունում, ինչպէս նաև անընդունելի է համարում բուսաբանութիւն առանց յաճախ բուսաբանական դրօսանքների: Արհեստանոցում, դաշտում, պարտիզում աշխատելով աշակերտները իւրաքանչիւր քայլափոխում ուսանում են մատեմատիքաւ և բնագիտութիւն: Այդպիսով բոլոր ուսուցումը սկսւում է դիտելով և փորձով: Զեռագործ աշխատութեան և նկարչութեան կապակցութիւնը մատեմատիքային և բնագիտութեան հետ — իսկոյն յիշեցրեց մեզ լեզուների կապը պատմական — աշխարհագրական առարկաների հետ: Այստեղ ևս երբեք չեն զբաղեցնում երեխաներին մեռած վերացական տեսութիւններով, այլ ամեն ինչ հիմնում են գործնականի, փորձի և տեսածի վրայ, այս բոլորը կարգի և սիստեմի է բերւում և վերջապէս արտայայտւում է ամենապարզ ձևով իբրև կանոն կամ ենթադրութիւն: Բազմաթիւ մատեմատիքական ֆորմուլաների և տեօրեմաների և առհասարակ բոլոր դատարկ մեքենայական և զուտ աստիճան գիտութիւնների անօգուտ բերան առնելը արտաքսուած է այս դպրոցից: Ոչ մի բան չէ աւանդւում

աշակերտին, որ նրան այս կամ այն կերպ պէտք է գալ ապագայ կեանքում: Երկրաչափութեան դասի առաջին մասը տեղի է ունենում ոչ թէ դասարանում, այլ բակում, ուր չափում են, մի բանի օր առաջ, իրանց աշակերտների ձեռքով կտրած երկու ծառեր: Չափելը վերջացնելուց յետոյ բոլոր աշակերտները ուսուցչի հետ միասին արագութեամբ վերադառնում են դասատուն, ուր գրատախտակի վրայ հաշուում են ծառի խորանարդ բովանդակութիւնը:

Առարկաների դասատուութիւնը նշանաւոր կերպով տարբերում է և նրանով, որ այստեղ հանդիպում ենք այնպիսի առարկաների, ինչպէս՝ առողջապահութիւն, բաղաբական տնտեսագիտութիւն, բաղաբագիտութիւն և օրէնսգիտութիւն: Մենք իսկոյն համոզուեցանք, որ դոքա լոկ անուններ չեն: Օրինակ առողջապահական դասին աշակերտները ուսուցչի հետ աշխատում էին որոշելու այն պատճառները, թէ ինչո՞ւ իրենց շորերն այս ձևն ունին և ոչ այլ, բընում էին իրենց ընկերի տկարութեան պատճառները և այլն: Բաղաբական տնտեսագիտութեան դասին նոցա սովորեցնում են ոչ միայն փող վաստակելու արհեստը, այլ գլխաւորապէս այն, թէ ի՞նչպէս կարելի է այն լաւագոյն կերպով գործադրել: Այդ դասի հիմք էր կազմում կրիին ոչ թէ ձանձրալի ձեռնարկը, այլ աշակերտների գրպանում եղած դրամը: Ուսուցիչը օգուտ բաղեց և այն փորձից, որ ձեռք էին բերել երկու աշակերտներ—երկու մի բանի օր առաջ յանձնարարութեամբ ուղարկեցին նրանց բաղաբ մի բանկային գրասենեակ: Օրէնսգիտութեան դասին այսօր աշակերտների ուշադրութիւնը գրաւում է դատաստանական մի վէճ, որ առաջացել է դպրոցապատկան հողի մէջ անցնող մի ճանապարհի պատճառով: Դասարանում կազմակերպւում է դատարան, որ միանգամայն անաչառ կերպով բընում է գործը, համաձայն ընդունուած իրաւաբանական կարգերի, — գրւում են յայտարարութիւններ, կազմւում են արձանագրութիւններ: Քննւում են այնուհետեւ պրեֆէկտների կողմից առաջարկուած օրէնքները, որոնց նպատակն է միջոց տալ նրանց առաւել արդիւնաւոր կերպով կատարելու իրենց պարտականութիւնները: Հիմք առնելով դպրոցական կեանքը, աշխատում են հայրենիքի մէջ գոյութիւն

ուսնեցող հիմնարկութեանց ճանաչողութիւնը զարգացնելու Բնագիտութիւնը և պատմութիւնը դասականութեան երկու մեծ շրջանների կենդրոնն են կազմում: Այդ երկու շրջանները իրար հետ կապակցւում է աշխարհագրութեան ուսուցմամբ: Ըստ հնարաւորութեան բնութիւնը քննւում է իւրեւ մի ամբողջութիւն: Յաճախ միւսնոյն առարկան, թէ բարձր և թէ ստորին դասարաններում քննւում է ֆիզիքական, քիմիական և բնախօսական կողմից:

Բայց ժամանակ է և կերակրի մասին մտածելու: Առաւօտը յատկացրած է ուսման, ճաշից յետ բացառապէս ֆիզիքական աշխատութեանց և խաղին, իսկ երեկոն՝ գեղարուեստին:

Ժամը մէկին մեզ ճաշի են կանչում, որ թէև պարզ է, բայց շատ լաւ: Լւուում է երգեցողութեամբ ասուած աղօթքը: Ապա երկու աւագներ մօտենում են բուֆէտին և կտրտում են տապակած միսը. հինգ բոպէից յետոյ նոցա փոխարինում են երկու պրեֆէկաներ: Այդ պարտականութիւնը մի մի շաբաթ հերթով կատարում են բոլոր աշակերտները, այնպէս որ ամենքը վարժւում են այդ գործում: Ամեն ոք ուտելու գործի է: Առանձին հակուսն են ցոյց տալիս պուդինգի վերաբերմամբ, որ պարտաւորական կերակուր է համարւում: Երկուշաբթի օրերը այստեղ կերակուրները զուտ բուսական են լինում—և առհասարակ միւս օրերն էլ բուսական կերակուրներն և ձկնեղէնը ճաշի գլխաւոր տեղն են բռնում: Ոգելից ըմպելիք չի տրւում ոչ աշակերտներին և ոչ ուսուցիչներին. այստեղ համոզուած են, որ ոգելից ըմպելիքները ֆիսսական ազդեցութիւն ունին մանկական կազմութեան վրայ և որ զանազան դժբաղդութիւններ—ոճրագործութիւններ և այլն սկիզբն են առնում նրանցից. դոցա փոխարինում են կաթը, կակօն և թէյն: Բոլոր աշակերտների դէմքի արտայայտութիւնը ապացուցանում է, որ նոցա սնունդը միանգամայն բաւարար է: Ճաշից յետոյ կրկին երգւում է մի աղօթք, որից յետոյ գնում ենք մատուռը: Երաժշտութեան ուսուցիչներից մէկը մի աշակերտի հետ նուագում են դաշնամուրի և ջութակի վրայ ժողովրդական և կրօնական եղանակներ, մատչելի մանուկների հասկացողութեան, ինչպէս նաև մեզ շրջապա-

տող գեղարուեստի և քանդակագործութեան արդիւնները, որ միանգամայն աղնուացնում են մանկանց էստեթիքական և քարոյական զգացմունքները: Մատուռից դուրս գալիս — լըսում ենք, ինչպէս փոքրերից մէկը ասում է իրենց նուագածութեան խմբապետին՝ «Արձակուրդներին ես ծնողներիս հետ թատրոն էի գնացել և այնտեղ լսեցի Վագների «Լիոնգրինը»»։ Ի՞նչ հաճութիւն և բաւականութիւն ստացայ, շատ եղանակներ ինձ ծանօթ էին, որովհետեւ մենք յաճախ նուագել ենք այն»:

Ճաշի հանգստից յետոյ մեզ տանում են հանդերձատուն, ուր աշակերտների նման հագնում ենք սպիտակ, կարճ բրդե անդրափաթիք, նեղ սպիտակ, կամ մոյգ կապտագոյն արիկոյի շապիկներ և բոլորովին կարճ գուլպաներ: Աշխատում են համոզել, որ մենք չենք մրսի, որովհետեւ այժմ սկսւում է ֆիզիքական աշխատանքը:

Մեր ուղեկիցը պատմեց, որ անցած շաբաթ աշակերտները փորում հանում էին գետնից գետնախնձորը, մարգեր էին պաշարաստում, ծառեր տնկում, դաշտում ձմեռուայ համար սահելաօտ էին պատրաստում: Մի քանիսը ելնելով բարձր ծառերի գլուխը՝ կտրում հեռացնում էին չորացած ձիւղերը, միւսները կտրում էին ծառերը, սղոցում և այլն: Աշակերտները շատ են սիրում այդ օրինակ գիւղատնտեսական և պարտիզայնական աշխատանքները, ուստի կարիք չի լինում ստիպելու նրանց առաւել եռանդով աշխատելու: Վատ եղանակին անգամ բացառութիւն չեն անում: Աշակերտները չեն զգւում և քաշում կեղտոտ գործից, թէև նրանք ամենքն էլ ունենոր ծնողների զաւակներ են, որոնց համար դժուար չէ տարեկան 1000 ռուբլի վճարել իրենց որդւոց ուսման և պահպանութեան համար: Արդեօք այս աշխատանքը ապագայում մի տեսակ կամուրջ չի՞ դառնայ, որը կմիացնէ դասական բաժանմունքը ստեղծող անդունդը, այնպէս, ինչպէս որ այստեղի լեզուների ուսումնասիրութիւնը ներկայանում է իբրև միջոց ազգերը միացնելու գաղափարի համար:

Պատմեցին, որ անցեալները մի խումբ աշակերտներ մաքրում էին լճակը, բայց և ոչ մէկը նրանցից դժգոհութեան նշան չի ցոյց տուել: Եթէ որևէ գործ չափազանց

անդուրեկան է թուում, այդ դէպքումն էլ նրանք իրենց խրախուսում են այն գաղափարով, որ կերթան սիրուն կողանան և աշխատելուց յետոյ ակորժակով կվայելեն իրենց համար պատրաստած համեղ ընթրիքը և վերջապէս այն գաղափարի գիտակցութեամբ, թէ ինչքան օգտակար է առողջութեան համար այդ գործը, որին պիտի յաջորդեն գարնանային և ամառնային դաշտային սիրուն պարապմունքները, մանաւանդ խոտհարքը, որ շատ են սիրում աշակերտները: Մինչև անգամ հիւանդանոցում եղածները, որոնց թիւը, ասում են, շատ սակաւ է լինում այնտեղ, նրանք անգամ եղանները և փոցիները շաւկած մեծ բաւականութեամբ ուղևորւում են խոտ հարելու Աւելի մեծ տօնախմբութիւն չկայ սյուսեղի աշակերտների համար, քան երբ դաշտից տուն են բերում խոտի վերջին սայլը — բոլոր աշակերտները և ուսուցիչները նուագածունների խմբի հետ միասին ուղեկցում են այդ սայլին: Ինչ համեմատութիւն այս հանդիսի և մեր դպրոցների «գրաւոր քննութիւնների» մէջ, եւ ես համոզուած եմ, որ այս սայլ խոտը առաւել նշանակութիւն ունի, քան բոլոր գրաւոր քննութիւնները:

Մի ժամից յետոյ բոլորս ուղղւում ենք դէպ արհեստանոցները, որ ընդարձակ և բարձր շէնքեր են: Ամեն մի աղայ իւր արկղիկից հանում է իրեն անհրաժեշտ գործիքները. մի բաժանմունք ատաղձագործարանում դաղգեահի առաջ կանգնած պահարան է շինում դիտողական ուսման իրերի համար, միւսները երկրագործական գործիքներ, փեթակներ, սանդուղք, գրքերի և նոտաների դարագներ, նըստարան, սեղան և այլն: Նայելուց չի կշտանում մարդ, անանելով թէ նոքա բոլորը ինչպիսի ճարպիկութեամբ գործադրում են ռանդան, սղոցը, կացինը, մուրճը և այլն: Դժբաղդ դէպքեր շատ սակաւ է պատահում: Գետափին մի խումբ մանուկներ պահեստի տեղ են պատրաստում դպրոցապատկան մակոյկների համար: Մի քանի աշակերտ մինչև ծունկ ջրի մէջ են: Մի շաքաթից յետոյ տեղի կունենայ անակի օրհնութիւնը, որին կից աշակերտների ձեռքով շինած են մեղրանոցը, թուջնոցը, մարմնամարդական իրերի համար տները և այլն: Երեխաներն իրանք պարծենում են իրենց գործերով և գլխաւորապէս այն բանով, որ ամեն ինչ

իրանք են շինուում: Գետից մենք դառնում ենք մի նոր շինած կամուրջով, որ նոյնպէս աշակերտներն են կառուցել: Դրա վերայ աշխատելիս մի աշակերտ, չափազանց լարուած դրութիւնից, տկարացաւ: Այդ առիթով դպրոցում տպագրուող թերթում ասուած է. «Նրան պատերազմի դաշտից տարան, ինչպէս մի զինուորի, որ վերք է ստանում իւր պարտականութիւնները կատարելիս: Մնացածները խաղաղ շարունակեցին իրենց գործը»: Մեղուանոցում, որի մօտից անցանք դառնալիս, դրուած է մօտ քսան հատ փեթակ, աշակերտների ձեռքով շինուած և այժմ խնամուող: Այդտեղից մենք անցնում ենք թաղերի հրապարակը: Շաբաթը երկու անգամ այդտեղ տեղի է ունենում զանազան բաժանմունքների մրցութիւնը. մրցութեան վերջին ենք հասնում, բայց նկատելի է թէ ինչպիսի յոժ է գործ դնում իւրաքանչիւր խումբ, մեծ գնդակը որոշ նպատակին հասցնելու համար: Այդ վարժութիւնը զարգացնում է մանուկների մէջ սառնասրտութիւն, հոգեկան արիւնթիւն, սրատեսութիւն և վստահութիւն: Խաղերի և մրցութիւնների ժամանակ վէճեր և դժգոհութիւններ չեն պատահում:

Յաղթողները չեն պարծենում, այլ հաճութեամբ խոստովանում են, որ յաղթութիւնը իրենց հեշտ չյաջողուեց: Որովհետեւ բոլոր խաղերի և մրցութեանց համար կան որոշ կանոններ, որոնց ամեն ոք հաճութեամբ հպատակուում է, ուստի և վարժութիւնները նոյնպէս գեղեցիկ միջոցներ են սաների մէջ հնազանդութեան և ընկերական համերաշխութեան գաղափարները զարգացնելու համար: Գրեթէ ոչ ոք չէ մնասւում այդ խաղերի ժամանակ, բայց եթէ արեան կաթիլ ևս երեւալու լինի, այդ բանը թեթեւ կանցնի, որովհետեւ նորա վարժուում են ոչ միայն աշխատանքի, այլ և ցաւերի: Ի զուր չէ, որ անձրեւային եղանակներին, երբ խաղերն անհնարին է անել, աշակերտները մի ամբողջ ժամ վազվզելով են անցկացնում: Դորանից յետոյ ամեն ոք մնում է լողարան, որի ջուրը թէեւ սկզբում գոլ է լինում, բայց յետոյ աստիճանաբար սառը ջուր աւելացնելով, դուրս են գալիս լողարանից, իրանց շատ լաւ զգալով: 4 ժամն է. երեխաները գնում են իրենց սենեակները շորերը փոխելու: 4¹/₀ — 6 ժամը նուիրում են դասերին: 6.ին ընթրիք են

վայելում, որ բաղկացած է կաթով թէյից, մրգեղէնից, իւղով հացից և մեղրից: Մի փոքր զբօսանքից յետոյ, 6 ից 38 ընդէ՛ անց սկսւում է երաժշտական վարժութիւն: Առանց բացառութեան բոլոր աշակերտները երգել են սովորում¹⁾: Նրանցից գրեթէ ամեն մէկը նուագում է որ և է երաժշտական գործիքի վրայ: Այսօր պատրաստւում են այն նուագահանդէսների համար, որ տեղի է ունենում երեք ամիսը մի անգամ: Դոցա ծրագիրները կազմում են զանազան երկիրների ժողովրդական և դասական եղանակներից: Ամեն օր, երբ աշակերտների վարժութիւնները վերջանում են — սկսում են նուագել ուսուցիչները և յառաջագէմ աշակերտները: Շաբաթը մի անգամ, նոյն ժամին, դասախօսութիւն է լինում երաժշտութեան պատմութիւնից: Նոյն ազատ ժամին ամեն օր կարդացւում է մի կտոր որ և է դասական հեղինակի գրուածքից և պատմւում է նրա կենսագրութիւնը: Միայն այդպիսով են ծանօթանում տղայք գրականութեան հետ: $7\frac{1}{2}$ — $8\frac{1}{2}$ ժամը երեխաները զբաղուել են դասեր կրկնելով, փոքրերը պրեֆեկտների հսկողութեան տակ: Անշուշտ այդ մի ժամը միանգամայն բաւական է կրկնութեան համար, որովհետեւ ամեն մի աւանդած դասի նիւթ հիմնաւորապէս մշակւում է և ըստ կարելւոյն իւրացւում դասի ընթացքում դասարանի մէջ:

Երբ մենք մի դասարանից միւսն էինք մտնում, մեր կողքից անցաւ մի երեխայ, բոլորովին կարմրած դէմքով և կըռան տակին մի պայուսակ: Երևաց, որ նրան ուղարկել էին մօտակայ բաղաբ փոստը ստանալու: Ուսուցիչը բացատրեց մեզ, որ այդ արւում է երեխայի մէջ պատասխանատւութեան, վստահութեան և անվեհերութեան զգացմունքները զարգացնելու համար: Ոչ մի աշակերտ, ինչ եղանակ էլ լինի, չի վախենում գիշերով գնալ բաղաբ և վերադառնալ: Ուսուցիչը պատմում է մեզ, որ մօտ անցեալում, գիշերուայ դէմ յանկարծ մի երեխայ հիւանդացաւ. վերատեսուէրը, որ միւսնոյն ժամանակ ուսումնարանի գլխաւոր բժիշկն է, իսկոյն որոշեց հիւանդութիւնը: Դպրոցական դե-

¹⁾ Հապա նրանց մէջ անընդունակներ չկան, որ սովորական է մեր դպրոցների համար: Ծ. Խ.

դատանք կարևոր դեղեր չգտնուեցաւ. հարկաւոր էր ուղարկել մօտակայ դեղատուն, որ 8 վերստ հեռու էր: Մոռեմ էր, անձրև և սաստիկ բամի: Մի բանի երեսայ ցանկութիւն յայտնեցին գնալու կառապանի փոխարէն. և հեծանիւով գնացող երեսան կառապանից շուտ վերադարձաւ:

8¹/₂ ժամին տղայք կրկին անգամ ստացան կակաօ և բիսկիտ, այնուհետև գնացին մատուռը աղօթելու, իսկ 9 ժամին պարկեցին բնելու:

Երեկոյեան աղօթքից յետոյ վերատեսչի հետ գնացինք նրա առանձնասենեակը: Գալիս են պստեղ մի շարք աշակերտներ—մի բանիսին նա խորհուրդներ է տալիս, միւսներին խրատում է, երրորդներին զգուշացնում, և այլ բուրլորը նոյն զգուշ եղանակով, որ մենք ամբողջ օրուայ ընթացքում տեսանք դասարաններում և բոլոր ուսուցիչներին վերայ,—երևում է, որ ուսուցիչները ոչ միայն աշակերտներին ուսուցանում են ինքնազսպութիւն, այլ և իրենք լիովին տէր են այդ բարիքին: Ի միջի այլոց աշակերտներից մէկը խորհուրդ է հարցնում, թէ ի՞նչ ասպարէզ ընտրի և վերատեսչի հարցին պատասխանում է, որ ինքը կկամենար ուսուցիչ լինել: Առհասարակ նկատում է, որ ուսուցչական ասպարէզը պստեղի աշակերտներին իդէալական է երևում: Արդեօք ամեն տեղ այդպէ՞ս է:

Աշակերտների հեռանալուց յետոյ, վերատեսչի մօտ ժողոված ուսուցիչները և պրեֆէկտները սկսում են խորհրդակցել, թէ օրուայ ընթացքում ի՞նչ դէպքեր են պատահել: Այդ ամենօրեայ խորհրդակցութիւններից զատ, շաբաթը միանգամ խորհրդակցութիւն է լինում «միաինգներ» կազմակերպելու վերաբերեալ խնդիրներ բննելու վճռելու համար: 4 շաբաթ մի անգամ տեղի են ունենում աշակերտական գիշերային ժողովներ, որտեղ վիճարանութեան առարկայ են զանազան խնդիրներ. օրինակ վերջին ժողովում բննում էր այն խնդիրը, թէ արդեօք որդին հօր ասպարէզը պէտք է ընտրէ ոչ: Պարզ է թէ մինչև ո՞ր աստիճան կարևոր են այդ օրինակ վիճաբանութիւնները: Այդ ժողովներում բացի այն, որ աշակերտները վարժւում են ազատ կերպով արտայայտել իրենց մտքերը, այլ և բննում

են ապագայ կեանքի բոլոր նշանաւոր կողմերը:— Այս հանգամանքի շնորհիւ նրանք ապագայում հեշտութեամբ կարող են իրենց կեանքի ճանապարհը որոշելու:

Ընդհանուր դաշլիճում, մենք հանդիպում ենք երկու այցելուների, որոնց հետ մեզ ծանօթացրին թէյ խմելու ժամանակ: Դրանցից մէկը այդ դպրոցի նախկին սան է: Երեւաց, որ նախկին սաները յաճախ այցելում են այս դըպրոցը — շատ անգամ նոյն իսկ Ամերիկայից, Հնդկաստանից և Աֆրիկայից: Նրանք հարստացած կեանքի փորձով, ոչ միայն նորից սկսում են հետազոտել դպրոցի կեանքը, այլ և յաճախ շատ օգտակար ցուցմունքներ են անում սաներին և ուսուցիչներին, որ միշտ ի նկատի է առնւում: Այս օրինակ այցելութեանց փաստերը մեզ հետաքրքիր են նաև այն տեսակէտից, որ ապացուցանում են, թէ նախկին սաները գիտակցելով դպրոցից ստացած օգուտները մինչև ո՛ր աստիճան շնորհակալ են նրանից: Ամենայն տարի տեղի է ունենում նախկին սաների ժողով, այստեղ վերանորոգում են հին բարեկամութիւնը, ընդհանուր ոյժերով հանդէս են հրատարակում — նուազահանդէս սարքում, մի խօսքով մի անգամ ևս ջահելանում են:

Երկրորդ հիւրը, որի հետ թէյի ժամանակն էինք ծանօթացել, մի տիկին էր, որի երեք որդիքը ուսանում են այստեղ:— Իր ասելով նա եկել է որդոց տեսնելու և դասերին այցելելու: Նա մեզ հաւատացնում է, որ որդոց նըկատմամբ ինքը միանգամայն անհոգ է, գիտենալով թէ ինչպէս նոքա կպած են դպրոցին և ինչ սէր ու խնամք են վայելում նոքա այստեղ: Նա իւր որդոց յանձնել է այս դըպրոցը ոչ թէ յարմարութիւնների համար, այլ համոզուած լինելով՝ թէ ինչ աստիճան փնասակար ներգործութիւն ունի մեծ բաղաբի մթնոլորդը մանկանց զարգացման վրայ:— Նրա խօսքերով արձակուրդներին երեխաները խօսում են միմիայն իրենց դպրոցի մասին, որ նրանք համարում են բոլոր ուսումնարաններից ամենալաւը: Այդպիսով այս ուսումնարանի ազդեցութիւնը նկատւում է և դպրոցի սահմաններից շատ հեռու:

Ցարէնը մի անգամ, սովորաբար Հոգեգալստեան տօնին, ծնողները մեծ թուով գալիս են ուսումնարան: Սաները դեռ

շատ առաջ պատրաստուում են նոցա ընդունելու համար. նրանք կրկնակի ջանք են գործ դնում նրանց առաջ փայլելու դասարանում, նուազահանդիսի սրահում, պարտիզում, խաղերի հրապարակում, որովհետև նոքա շատ բարձր են գնահատում ոչ միայն իրենց, այլ և նոյն իսկ հաստատութեան պատիւը — նուազածուծեամբ ընդ առաջ են գնում ծնողներին. վերջիններս այցելում են դասերը, հայրերը մասնակից են լինում խաղերին և զանազան մրցութիւններին. օրինակ լողի, և յաճախ պարտութիւն են կրում: — Ի՞նչ ցնծութիւն և հպարտութիւն: Ուսումնարանը և ընտանիքը փոխադարձաբար յայտնում են իրար իրենց դիտողութիւնները, մօտենում են և միանգամայն լի փոխադարձ վստահութեամբ բաժանուում իրարից:

Այդ տօնախմբութեան մանրամասն նկարագիրը կարդում ենք դպրոցական օրաթերթում, ուր վերատեսչի ներածութեան հետ գտնում ենք դպրոցում պատահած անցքերի տարեկան հաշիւը, գրուած Դ աշակերտի ձեռքով, աշակերտական արկղի դրամական հաշիւները, որ մօտ 250 ռուբլի եկամուտ ունի: Նոյն հաշուից մենք իմանում ենք, որ դպրոցի բարեկաճները նուիրել են 630 ռուբլի գետի վրայ նոր կամուրջ կառուցանելու համար: Նոյն տեղումնք կարագրուած են զանազան դպրոցական ճանապարհորդութիւններ, Այդ բոլոր յօդուածներից, որ ըստ մեծի մասին աշակերտների գործ է, առաւել պարզ գաղափար ենք կամում դպրոցական կեանքի վերաբերմամբ և աւելի խոր ենք թափանցում կրթութեան գործում բան թէ սովորական պաշտօնական հաշուետւութիւններից: Այդ տեղեկագիրը շատ փոքր վարձով (յօգուտ աշակերտական «խաղերի դրամարկղի») ուղարկւում է հետաքրքրուողներին: Վերջին տեղեկագրի վերջին յօդուածը աւարտւում է հետեւեալ բառերով. «Հասաւ և ձիաս բարեւի ըրպէն: Ամենքը տխուր էին: Հետեւեալ առաւօտ 5 ժամին մենք արթնցանք և 6¹/₂-ին թողինք Աբբասգօլմէն լի այնպիսի զգացմունքներով, որոնց բառերով արտայայտել անկարելի է: Այդ բառերը գեղեցիկ ապացոյց են աշակերտների սերտ կապին դպրոցի հետ և թէ որքան սիրուն է նորա կազմակերպութիւնը:

Մանուկների առողջութեան մասին մեր հարցին ցոյց

առւին բժշկական տեղեկագիրը, որից հաւաստիացանք, որ հիւանդների համար կառուցուած յարմարաւոր և գեղեցիկ հիւանդանոցը մեծ մասամբ դատարկ է լինում: Դա, ի հարկէ կախուած է կեանքի պայմանների միահամուռ կազմակերպութիւնից, կերակրից, մտաւոր և ֆիզիքական աշխատութեանց կանոնաւոր յաջորդականութիւնից, նպատակայարմար կերպով կտրած զգեստներից, մարմնի կաշու վրայ ունեցած խնամքից և այլն: Գրեթէ նոքա չգիտեն թէ ի՞նչ է հարբուհը, հազը և այլ նման հիւանդութիւններ, — չնայելով որ աշակերտները շատ էլ չեն սիրում ձմեռ վերարկու հագնել: Այս բոլորի գլխաւոր պատճառն այն է, որ այս դպրոցում ամեն րանի մէջ հետեւում են լնութեան ցուցմունքներին և իրենց ենթարկում են լոյսի, օդի և ջրի հրաշագործ ներգործութեան:

Աշակերտները ունին իրենց իդէալները — որոնք են Աթենացիք Մարաթոնի դաշտում, Սպարտացիք Էվրոտում, Բէօփուլփը, Վալսերը, Ջիգֆրիդը, Ալֆրիդ Մենը, Կրովելը, Նելսոնը, Վելէօգտոնը, Բլիւիսերը, Վաշինգտոնը, Լինկոլնը, Հարֆիլդը, Լիվինգստոնը, Ստէյլին, Նանսէնը և ուրիշները: Բայց բերան անել չեն տալիս սոցա կենսագրութիւնները, չեն բաւականանում նաև նրանով, որ աշակերտների առաջ հանդէս բերեն հերոսին պատկերի կամ երգի միջոցով, այլ աշխատում են իրենց աշակերտներին դարձնել Աթենացիք, Սպարտացիք և այլն: Վազում են նոցա հետ, ինչպէս Աթենացիք Մարաթոնի դաշտում, լող են տալիս, ինչպէս Սպարտացիք Էվրոտի մէջ, ըմբշամարտում և խաղում են ինչպէս Յոյները Ոլիմպոսում. ստիպում են նոցա մասնակցութիւն ունենալ պետական գործերին, ինչպէս լինում էր Աթէնքի հրապարակում, աշխատում են թատրոնը դպրոցի համար բարոյականութեան կրթարան դարձնել, ինչպէս այդ հընուֆն էր, — զննել են տալիս գեղարուեստի արտադրութիւններ Փիդիասի ժամանակները: Չնայելով որ մեզանից առաւել պակաս ժամանակ են նուիրում յունարէն լեզուին, աշակերտները առաւել լաւ յոյներ են դառնում և վայելում յունական բաղաբաղրութեան պտուղները: — Եւ իսկապէս, յոյները ևս նորա համար չապրեցին, որ մեր երեխաները ստիպուած լինեն բերան առնել զանազան դասա-

կարգերից հազարսուոր պարագաներ և հարկւրաւոր ժամանակագրական թուեր։ Ո՛չ, նոքա ապրում էին նրա համար, որպէս զի նոցա միջի ազնիւն և գեղեցիկը դոյութիւն ունենար բոլոր ժամանակների և սերունդների համար։ Նոքա գիտէին ապրել.— այդ ձեւը սովբեցնում էին և իրենց սերունդին։ Նոքա մեզ աւանդ են թողել— քամնից առաջ մեր սերունդին սովբեցնել ապրել, կամենալ, գործել, մտածել, խօսել և ապա կարգաւ և գրել։— Օժտելով երեխաներին գրքերից քաղած իմաստութիւններով, մի մոռանաք նոցա օժտելու և կեանքի իմաստութեամբ։ «*primo vivere, deinde philosophari*»:

Գալով աշակերտների բարոյականին— ուսուցիչները վրկայում են, որ քիչ շատ լուրջ յանցանք չեն նկատել այդտեղ։ Ուսուցիչները ապրում են աշակերտների հետ, լաւ են իմանում նոցա բնութիւնը և կարողանում են չարութեանց առաջն առնել։— Այն հանգամանքը, որ ուսումնարանի մօտ պանդոկներ չկան՝ նոյնպէս նշանակութիւն ունի։ Սակայն դպրոցն ևս առանց պատիժների չէ։ Բայց աշակերտներին չեն բանտարկում միւս չարերի հետ, այլ ընդհակառակը «յանցաւորին» մի առժամանակ տեղաւորում են լաւ աշակերտների շրջանում, նա այդ ժամանակ նրանց հետ նրստում է և ուտում, խմում և ննջում, կարգում և հանգստանում։ Երբ այդ չի օգնում, ապա յանցաւորին ստիպում են վաղվղել բակում և զանազան ֆիզիքական աշխատութիւններ կատարել։ Սակայն չեն կարող չնկատել, որ կրթական ամենանշանաւոր միջոցներից մէկը պատժի միջոց դարձնելը հազիւ թէ բարեբար ազդեցութիւն կարող է ունենալ։ Սակայն աւագ ընկերների ազդեցութիւնը, ուսուցչի շարունակ մօտիկ լինելը, կեանքի եղանակը և առհասարակ գործի այդ օրինակ կազմակերպութիւնը, պատժի կարեւորութիւնը գրեթէ աւելորդ են կացուցանում։ Ուսուցիչների յարաբերութիւնը աշակերտների հետ հիմնուած է լիակատար վստահութեան վրայ։ Ուսուցիչները նոցա ցոյց են տալիս, թէ չեն կամենում և չեն կարող հաւատալ, որ երեխաները կարող են խաբել, սուտ խօսել, անհնազանդ լինել, սաների սրտերում զարգացնում են այն համոզմունքը, որ այդ ամենը չափազանց անվայել կլինէր նոցա համար։

Ուսուցիչները աշխատում են հեռացնել այն բոլոր առիթները, որ կարող էին յանցանքների աղբիւր դառնալ և միւս կողմից այն ամենը որ ուսումնարանը կարող է ուստիկանատուն դարձնել: Աշակերտներին դժից վեր աշխատանք չէ տրւում, որ չեն կարող կատարել ինքնաբերաբար առանց այլոց օգնութեան: Զի արգելւում ոչ մի բան, որ առաջ է գալիս նոցա բնական պահանջներից. աշխատում են աղատութիւն տալ նոցա ինքնագործունէութեան, հեռացնել ամեն մի արտաքին ստիպման կամ ճնշման նշան: Նոցա չեն արգելում օգտուելու իրենց բնական իրաւունքներից, այդ է պատճառը որ նոքա հաճութեամբ հնազանդութիւն են ցոյց տալիս, երբ պահանջը առաջանում է ոչ թէ ուսուցչի կամայականութիւնից, այլ բոլոր օրէնքներից բարձր պահանջներից: առանց որի, ինչպէս նոքա համոզուած են, ուսումնարանը չի կարող գոյութիւն ունենալ: Պատիժները նոքա կրում են անտրտունջ և յաճախ իրենք են պահանջում: Պատիժը կրելուց յետոյ նոքա կրկին ընդունւում են ընկերների և ուսուցիչների շրջանի մէջ: Խաղի ժամանակ երեխաները վարժւում են ինքնայոժար հնազանդութեան և ինքն իրեն զսպելուն և այդ պատճառով նոքա այդ ընդունակութիւնները ցոյց են տալիս առաւել նշանաւոր հանգամանքներում: Ամենալաւ կերպով հեշտացնում են բարոյական կրթութեան գործը լաւ աշակերտները: Ամեն մի վատ հակումն արմատի մէջ ոչնչացւում է: Սովորութիւնը և ընկերութիւնը աւելի լաւ ազդեցութիւն ունին, քան թէ ծեծը և բարոյները: Պահանջելով, որ աշակերտները կարող լինեն իրենց զսպել, ուսուցիչները ինքեանք նոյնը գործով են ցոյց տալիս: Բարկացած ժամանակ մէկին պատժելը անարժան արարք է համարւում: Ուսուցչի մի հայեացքը և նոյն իսկ լուութիւնն աւելի է ազդում, քան թէ ծեծը և աղաղակը, որ ճնշում է սեփական արժանապատուութեան զգացմունքը:

Այսբանը բարոյական կրթութեան մասին, ինչ կրօնականին է վերաբերում, նկատեցինք, որ քրիստոնէական վարդապետութիւնից և հին ուխտից շատ բան չգիտեն կամ աւելի ճիշտ ասած հաստատ չգիտեն: Այդ խնդրի նկատմամբ ևս ուսուցիչները մեզ տալիս են ցանկալի բացատրութիւնը: Կրօնն այստեղ գործ է ոչ թէ բառերի և դատողութեան,

այլ սրտի և կեանքի: Այստեղի բոլոր մթնոլորդը կրօնա-
կան բարոյական է: Ոչ միայն մատուռում կարդացուած ա-
ղօթքը, այլ և դասերը, մանաւանդ բնագիտութեան ու
պատմութեան դասերը և զբօսանքները— մի տեսակ աղօ-
թելու բնաւորութիւն ունին: Կրօնի դասաւանդութեան մէջ
պատահող բոլոր ձեւական մասը դուրս է մղուած: Անար-
ժան է համարուում այստեղ աշակերտին անձաշ թողնելը
և վատ թուանշան նշանակելը կրօնի դասը չպատրաստելու
համար: Ամենից աւելի երկիւղ են կրում, որ մի քուցէ ու-
սուցիչներին վայրկեւոյ վերաբերումից և կամ աշակերտնե-
րի կողմից թշնամական յարաբերութիւն արծարծուելուց
նսեմացուի կրօնը: Այդ պատճառով չափազանց խոյս են
տալիս հաղորդել երեխաներին հին ուխտի պատմութիւնից
այնպիսի տեղեր, ուր խօսուում է ստութեան, խաբեքայու-
թեան, սպանութեան և այլն մասին: Աստուածաշնչի փո-
խարէն աշակերտների ձեռքը տալիս են հատընտիր քա-
ղուածքներ այնտեղից: Աստուածաշունչը ամբողջապէս ա-
ռած—մի գիրք է բացառապէս հասուն մարդոց համար:
Յաճախ երեխաների համար կարդում են սրբերի և բոլոր
ժամանակների և ազգերի մեծ մարգարէների վերաբերեալ
գրուածքներ: Աշակերտները երբէք ծաղր չեն լսում որեւէ
սրբազան բանի վերայ, երբէք անտարբեր և թեթեւ կերպով
չեն վերաբերւում դէպի չարը և Քրիստոս դառնում է ե-
րեխաների բարեկամը, առաջնորդը, եղբայրը, օրինակը և
իգէտը: Այս դպրոցի համար գոյութիւն չունին հաւատքի
վարդապետութեան վերաբերեալ վիճելի խնդիրներ, ոչ ոք
չի պարապում կեղծ ուսմունքների հերքումներով: Այդ՝ ե-
կեղեցու գործն է, իսկ ուսումնարանի գործը պիտի լինի
պատկերացնել աշակերտների առաջ, համաձայն երեխաների
հասակի, զարգացման և պահանջների, կրօնական կեանքի
օրինակներ: Բարձրական կրթութեան նպատակներին է ծա-
ռայում և պատմական անձնաւորութեանց, ինչպէս օրինակ՝
Կոնֆուցիոսի, Բուդդայի, Սողոմոնի, Սոկրատեսի, Սենեկայի,
Մարկոս Աւրելիոսի, Ուլֆիլի, Պետրոս Վալդայի, Վիկտֆի,
Հուսի, Սափօնարօյայի, Լիւտերի, Յիւնգլիի, Կալվինի, Քը-
րանկէի, Կարլէյլի, Բեսկինի և այլոց կենսագրութիւնների
ընթերցումը:

Վերը յիշեցինք, որ նոյն նպատակին է ծառայում նա և գեղարուեստը՝ երգեցողութիւնը, նուագածութիւնը, նըկարչութիւնը, քանդակագործութիւնը և բանաստեղծութիւնը: Այդ ամենը ամփոփում են իրենց մէջ խրատներ մարդու դրական արժանաւորութիւնների նկատմամբ:

Բայց արդէն ուշ է. ուսուցիչները ցրում են և մենք միայնակ ենք մնում ընդհանուր դաշլիճի մէջ և խորասուզւում մտածմունքների մէջ: Թւում է, որ մենք այստեղ տեսնում ենք բոլորովին նոր աշխարհ: Մեծ մանկավարժների իդէալների ո՞ր աստիճան փոքրագոյն մասը մենք կարողանում ենք իրագործուած տեսնել. այն ինչ, այս դպրոցում եթէ բոլորը իրագործուած չէ, գոնէ աշխատում են իրագործել:

Եթէ մեզ հարց տալու լինինք, թէ ի՞նչ է պատճառը այս դպրոցի գործունէութեան յաջողութեանը, դրա պատասխանը կլինի՝ ո՛չ միայն խաղերը, ձեւքի աշխատանքը, մի ակնլորդ պատկերը կամ նուագածութեան դասը և այլն և այլն, այլ որ կրթութեան սիստեմի բոլոր մասերում նկատւում է մանկավարժական տաղանդ, որ այդ սիստեմի բոլոր մասերը յաջորդաբար իրար հետ ձուլւում ամբողջութիւն են կազմում, որ բոլոր, նոյն իսկ շատ փոքր բաներում, դաստիարակները միշտ ի նկատի ունին կրթութեան իսկական նպատակը, հեռացւում է այն ամենը, ինչ որ անօգուտ և փնասակար է համարւում ու չի ծառայում գլխաւոր նըպատակին. ուսումնարանի յաջողութիւնը կախուած է՝ կըրթական բոլոր միջոցների նպատակայարմար գործադրութիւնից, ուսումնարանի ոգուց և կեանքից ու նրանից, որ այդտեղ ուսուցիչները կոչուած են ամբողջապէս իրենց նուիրելու մի մեծ գործի — մատաղ սերունդի կրթութեան գործին:

Այնտեղ դատապարտում են այն անբնական ընթացքը, որ տիրապետում է այժմ կրթական գործում: Գանգատւում են, որ ժամանակակից մարդկութիւնը բաժանուած է երկու մասերի, ֆիզիքական աշխատանքի ստրուկների և գրքերի մէջ իրենց կեանքը անցկացնող «գիտնականների»: Համոզուած են, որ մարդկութեան բարօրութեան համար անհրաժեշտ է, որ դասակարգերը և ազգերը իրարից բաժանող անդունդները ոչնչանան, որ գիտնականները ընտելանան ֆիզիքական

աշխատանքի, իսկ գործարանական բանուորը միջոց ստանայ խոյս տալու հոգեկան և բարոյական անդամալուծութիւնից, որին նա դատապարտած է, երբ օրըստօրէ մեքենայական ճանապարհով պատրաստում են որեւէ մեքենայի մանր մասերը, — որ նա միջոց և ընդունակութիւն ունենայ իրեն համար հոգեկան և գեղարուեստական զուարճութիւն ստեղծելու: Մեքենայի ստրուկը և սենեակում փակուած գիտնականը երբէք չեն սիրի իրար: Նոքա երկուսն էլ մատնուած են թէւէ դանդաղ, բայց անկասկած ոչնչացման: Քաղաքակրթութիւնը, որ բանի գնում այնքան աւելի քայքայում է մարդկանց առողջութիւնը, թուլացնում և քնքշացնում նոցա, կրում է իւր մէջ կազմալուծման սերմերը, ինչքան էլ բարձր լինի նա կանգնած: Միայն կանոնաւոր և ուղիղ ճանապարհով ընթացող կրթութիւնը կարող է շատ նպաստել բարեւոք ապագայի հասնելուն:

Թարգմ. Ա. ՄՊԱՐԱՊԵՏԵԱՆ

